

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ

Սիրելի՛ երեխաներ,

Շնորհավորում եմ ձեզ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առիթով: Այս օրը ավելի մեծ խորհուրդ ունի մեծերիս համար. հայ մարդը բոլոր ժամանակներում էլ ընտանիքի ու երեխաների նկատմամբ ցուցաբերել է առանձնահատուկ հոգատարություն ու նվիրվածություն: Դուք մեզ համար ոչ միայն ուրախություն եք ու հպարտություն, այլև կյանքի իմաստ և մեր ապագան նախանշող փարոս:

Մենք շատ ու շատ անելիքներ ու պարտականություններ ունենք ձեր նկատմամբ և անելու ենք հնարավորը, որպեսզի ձեր ապագան լինի պայծառ ու լուսավոր, մեծանաք առողջ ու ապրեք վայելուչ կյանքով: Մեր ուշադրության կենտրոնում է լինելու ձեր՝ առողջության ու բարեկեցության, ինքնահաստատման ու առաջընթացի համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն միտված խնդիրների լուծումը:

Ուզում եմ առանձնահատուկ շնորհավորել նաև բոլորիդ ծնողներին, քանզի ձեր անցնելիք ճանապարհի արժանապատվության ապահովման առաքելությունն առաջին հերթին նրանց ուսերին է դրված:

Թանկագին՝ երեխաներ, մեկ անգամ ևս ի սրտե շնորհավորում եմ ջերմությամբ լի այսօրվա կապակցությամբ, մաղթում անամպ երկինք, ընտանեկան ջերմություն ու երջանիկ մանկություն:

Թող իրականություն դառնան ձեր բոլոր նվիրական իղձերն ու երազանքները:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

1 հունիսի 2016թ.